Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Բաղդասարյան

Ուսուցիչ՝ Մարիետա Մելքոնյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Հետազոտության նպատակը …… 3

Հետազոտության խնդիրները…… 3

Ընտանիք – դպրոց համագործակցության կազմակերպումը …… 7

Ուսուցիչ-ծնող համագործակցության պայմանները…….. 9

Ծնող-ուսուցիչ փոխհարաբերության ձևերը…… 13

Ամփոփում…….. 14

Եզրակացություն…… 15

Գրականություն……. 16

«Սովորական ուսուցչը պատմում է:

Լավ ուսուցիչը բացատրում է:

Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս:

Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է»:

Ուիլյամ Ուորդ

Հետազոտության նպատակը

- ✓ Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև:
- ✓ Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- ✓ Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:
- ✓ Ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Հետազոտության խնդիրը

- ✓ Հետազոտության համար որպես խնդիր եմ սահմանել ծնող-ուսուցիչ համագործակցության՝ կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորումը:
- ✓ Ինչպե՞ս ներգրավել ծնողներին տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:
- ✓ Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

Ներածություն

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը որպես մի շարք գործոնների և ազդեցությունների համակցություն, այն ուղեկցում է մարդուն ծնված օրից մինչ չափահասություն: Կրթության համար պատասխանատվություն են կրում ընտանիքը և դպրոցը: Այդ տեսակետից բացարձակ անհրաժեշտություն է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև հաղորդակցման բարելավումը և նրանց իրական համագործակցության կառուցումը: Եթե մենք ուզում ենք բարելավել մեր հասարակության կրթական կարիքները, անհրաժեշտ է սովորողների ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել ընդհանրական և արդյունավետ դարձնելու նպատակով:

Դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համատեղ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ, հոգատար, հանգիստ, հավասարակշռված և ուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները միմյանց, երեխաների և ուսուցիչների հետ: Ծնողները երեխայի առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ՝ իրենց երեխաների կյանքի, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգանալու համար: Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական տարիքի երեխաների կրթության համար:

Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները և պատասխանատվությունը: Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքներում, և՛ դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Ո՛չ ծնողները, ո՛չ ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները, հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երեխաներին՝ հասարակության մեջ պատշաճ կերպով ինտերգրվելու համար:

Ուսուցիչ-ծնող ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը:

Առաջին օրվանից այդ փոխհարաբերությունն ամուր հիմքի վրա պետք է լինի, իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ:

Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնող-ուսուցիչ-դպրոց օղակը: Մեր հասարակության արժանի քաղաքացի դաստիարակելու նպատակով պետք է համագործակցեն ծնողները և ուսուցիչները:

Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին համընթաց, լինի բանիմաց, անկաշկանդ, իմանա ու գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները:

Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա օգտագործելով իր բոլոր ընդունակությունները և վստահություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ:

Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումը օգնում է ուսուցչին՝ տեղյակ լինել, թե ի՞նչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այլ կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է տալիս հասկանալ ու օգնել երեխային: Ընդ որում, այդ օգնության կարիքը զգում են ոչ միայն երեխաները, այլև ծնողները: Անհրաժեշտ է նրանց գիտակցությանը հասցնել, որ իրենք միայնակ չեն, իրենց կողքին են ուսուցիչները մյուս ծնողները և ընկերները:

Ուսուցման և դաստիարակության գործընթացում ցանկալի արդյունավետության ապահովումը պայմանավորված է ոչ միայն առկա ուսումնական նյութի ճիշտ ու ժամանակին յուրացմամբ, այլև երեխայի արժեքային համակարգի ձևավորմամբ:

Երեխաների դաստիարակությունը ծնողների սահմանադրական պարտականությունն է: Նրանք պարտավոր են

- Խորացնել դպրոցի և ուսուցչի հեղինակությունը
- Ներարկել հարգանք դպրոցի և ուսուցչի հեղինակության նկատմամբ,
- Երեխաներին ներարկել սեր ու հարգանք աշխատանքի նկատմամբ,
- Նախապատրաստել նրանց հանրօգուտ աշխատանքի,
- Ընտելացնել կարգապահությանը
- Հոգ տանել նրանց առողջության ու ֆիզիկական զարգացման մասին:
- Խթանել ուսումը և նպաստել մասնագիտության ընտրությանը:

Դպրոցը պիտի ընդունի ընտանիքի այս օգնությունը: Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտեր են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներից: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտների մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքին նախապատրաստումն ու մասնագիտական կողմնարոշումը: Ծնողներնը պետք է ակտիվ մասնակցեն մանկավարժական գործընթացին:

Ընտանիք – դպրոց համագործակցության կազմակերպումը

Այս ուղղությամբ ուսուցիչը կարող է աշխատանքը հաջողությամբ իրականացնել, եթե դպրոցը համագործակցի ընտանիքի հետ: Շատ հաճախ երեխայի դաստիարակության գործընթացն իրականացվում է այդ համագործակցությունից դուրս, որը, ցավոք, տխուր հետևանք է ունեում :

Արդեն ապացուցված է, որ դաստիարակությունը հաջողություն է ունենում , եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում է միաժամանակ:

Մեր իրականության մեջ ծնող-երեխա փոխհարաբերությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է: Այլ ժամանակաշրջանում դաստիարակված և մանկությունն ապրած մեծահասակները դժվարությամբ են ընդունում և հարմարվում նոր սերունդների վարքուբարքին, տեխնիկական առաջխաղացումներին և այլն, ինչի հետևանքով առաջանում են անհամաձայնություններ, բախումներ, կոնֆլիկտային իրավիճակներ, մերժված, չսիրված լինել զգացումներ և այլն: Սրան ավելանում են նաև ծնողների և երեխաների ճգնաժամային դրսևորումները: «Լավ ծնողների մոտ մեծանում են լավ երեխաներ». բավականին հաճախ ենք օգտագործում այս արտահայտությունը՝ հաճախ դժվարանալով բացատրել, թե ինչ է նշանակում լինել «լավ ծնող»: Շատերը կարծում են, որ « լավ ծնող» կարելի է դառնալ՝ ուսմնասիրելով մասնագիտական գրականություն կամ տիրապետելով հատուկ մեթոդների: Սակայն միայն գիտելիքները բավարար չեն, անհրաժեշտ է ունենալ ինտուիցիա, երեխային լսել, ապրումակցել, բարենպաստ մթնոլորտ ստեղծել, գիտելիքները գործնականում կիրառել և երեխայի անձնային առանձնահատկություններին հարմարվելու հմտություն ունենալ: Ծնողավարության ընթացքում մեծ սխալներից, սակայն մեկ այլ ծայրահեղության դեպքում, եթե ծնողը փորձում է անթերի իրականացնել ծնողական խնամքն ու պարտականությունները, կարող է խոչընդոտել երեխայի ինքնուրույն արարելու, փնտրելու, գտնելու և որոշում կայացնելու ունակության ձևավորմանը: Ընտանեկան փոխհարաբերություններում մեծ նշանակություն ունի նաև սիրո պահանջմունքի բավարարումը: Ծնողական սերը իր երեխայի նկատմամբ անսահման է և առանց պայմանի. այն երեխայի հոգևոր և մարմնական առողջության

հիմքն է: Ծնողների և երեխաների ընդհարումների պատճառը հաճախ երեխաների ինքնուրույնության և անկախության ձգտումն է: Երեխաների այդ ձգտումը զուգորդվում է նրանց ֆիզիկական զարգացման հետ: Սակայն այդ ինքնուրույնության հետ համատեղ երեխաները շարունակում են հուզականորեն սերտ կապի մեջ մնալ ծնողի հետ: Առավել խնդրահարույց իրավիճակում են հայտնվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողները, քանի որ նրանց մոտ հավելյալ նաև երեխայի առանձնահատկություններով պայմանավորված դժվարություններ են ծագում՝ երեխայի խնդրի ընդունում, բացասական հուզական ապրումների հաղթահարում, նրա խնդրին համապատասխան աջակցությոան ցուցաբերում և այլն: Ծնող-երեխա փոխհարաբերությունների վատթարացմանը նպաստում են նաև շրջապատի կողմից չիմացության հետևանքով երեխայի խնդրին տրվող ոչ համարժեք արձագանքը, ծաղրանքը, երեխայի վարքային դրսևորումների բացասական մեկնաբանումները և այլն: Երեխայի լիարժեք զարգացումը առաջին հերթին իրականանում է բարենպաստ և ներդաշնակ ընտանեկան միջավայրում: Ծնողավարության ընթացքում հաճախ հանդիպում են նաև խնդիրներ մասնագետ-ծնող փոխհարաբերություններում, ինչը կարող է խոչընդոտել արդյունավետ փոխհամագործակցության ծավալմանը: Երեխաների հետ աշխատող մասնագետները երբեմն չեն կողմնորոշվում՝ ինչպես շփվել հուսահատ կամ ագրեսիվ, անտարբեր կամ կասկածամիտ ծնողների հետ: Կարևորվում է նաև մասնագետի կողմից ծնողներին ապրումակցելու կարողության զարգացումը, ինչի թույլ արտահայտվածությունը հաճախ խոչընդոտում է ծնողի հետ կառուցողական հարաբերությունների ձևավորմանը: Թերևս սրանք այն հիմնական դժվարություններն են, որոնք հանդիպում են ծնողավարության ընաթացքում:

Ուսուցիչ-ծնող համագործակցության պայմանները

Ուսուցիչ-ծնող շփման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները

- ✓ Խոսակցությունը չսկսել անմիջապես երեխայի հետ կապված հիմնախնդրից:
- ✓ Չշտապել անմիջապես լուծել այն:
- ✓ Քննարկել այն հուզական վիճակները, որոնք առաջ են գալիս դպրոցի, ուսուցիչների, երեխաների պատճառով:
- ✓ Ուշադիր լսել և ընդունել այն, ինչ ասում է ծնողը, փորձել հասկանալ, թե ինչո՞ւ է նա այդպես մտածում:
- ✓ Ծնողներին հատկացնել այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է տվյալ իրավիճակում:
- ✓ Ծնողներին տեղեկություններ հաղորդել անձամբ և ոչ թե երեխաների կամ երրորդ անձի միջոցով:

Ծնողների հետ հիմնական աշխատանքը դպրոցն անցկացնում է ծնողական միավորումների միջոցով: Յուրաքանչյուր միավորում ունի իր կանոնադրությունը, որի մեջ նշված են դաստիարակության գործընթացի հիմնական ուղղությունները, իրավունքները ու պարտականությունները: Դպրոցի և ուսուցչի հեղինակությունը էապես պայմանավորված է ծնողական ժողովների կազմակերպմամբ ու անցակացմամբ: Ուսուցչի գործունեությամբ է որոշվելու կուզենա արդյո՞ք հետագայում ծնողն այցելել դպրոց, օգնել երեխայի դաստիարակության հարցերում, ճիշտ արձագանքել տվյալ բնագավառում երեխայի հետ կապված խնդիրներին, թե՞ ոչ: Դպրոցական պրակտիկայում ձևավորվել են ծնողական ժողովների հետևյալ ձևերը

- ✓ Դաստիարակչական ընդհանուր խնդիրներ
- ✓ Ծնողներին հուզող հարցերին վերաբերող ժողովներ,
- ✓ Համակցված ժողովներ:

Ուսուցիչը որոշում է հարցերի շրջանակը, որոնք առաջ են գալիս ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելու ընթացքում: Ժողովների ժամանակ կարելի է կազմակերպել աշակերտական աշխատանքների

ցուցահանդես: Օրինակ՝ լավագույն տետրերի, ստեղծագործական աշխատանքների և այլն:

Հայտնի , որ բոլոր ծնողները չէ, որ տիրապետում են երեխայի դաստիարաության ու նախնական ուսուցման նրբություններին, ինչպես նաև մանկավարժական մեթոդներին: Այդ հարցը հիմնավորապես կարգավորվում է ծնող-ուսուցիչ կապի միջոցով: Կարևոր է, թե ինչպիսին է նրանց մտահոգությունների բնույթը, քանի որ առանցքը կոնկրետ երեխայի ուսումն ու դաստիարակությունն է, ապագա քաղաքացու բնավորության նախադրյալների մշակումը՝ օրեցօր փոփոխվող ու մեծացող մանկական բնավորության մեջ:

Ծնողների հետ հիմնական համագործակցությունը լինում է նամակների, զրույցների, խորհրդատվության, տնային այցելությունների միջոցով:

Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ընտանիքի հետ՝ լուծում է հետևյալ խնդիրները:

- ✓ Ճանաչել երեխայի ընտանքիը:
- ✓ Ուսումնասիրել երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա:
- ✓ Օգնել ծնողներին՝ ընտանեկան պայմաններում դաստիարակելու:
- ✓ Կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:
- ✓ Չեզոքացնել ընտանիքի բացասական ազդեցությունը:

Ուսուցիչն ու ընտանիքը ամուր դաշնակիցներն են: Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է սպասել դրական արդյունքների:

Դասարանի աշակերտները սեփական ընտանքիների յուրատիպ արտացոլումն են, և մեծ ուժ է անհրաժեշտ, որպեսզի դասարանում ուսուցիչն ստեղծի միասնական առողջ մթնոլորտ: Այդ կոլեկտիվի միջանձնային ներդաշնակ հարաբերությունները կնպաստեն հարաբերությունների ձեռքբերմանը: Այս ասպարեզում յուրաքանչյուր անհատ իրեն զգում է լիրավ գործող անդամ և ամեն պարագայում պատասխանատու անձ: Դասարանի յուրաքանչյուր ոք կձգտի խորհրդակցել, իր հաջողություններով ուրախացնել, կամ դժվարությունները կիսել հարազատ դարձած մարդկանց հետ: Ուսուցչի պարտքն է.

- ✓ Ճանաչել ու հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները,
- ✓ Պաշտպանել նրանց՝ դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում:

Այս բոլոր գործոնները երեխաներին կհաղորդեն պաշտպանվածության զգացում և ինքնավստահություն, կստեղծեն ստեղծագործական ակտիվություն ու լիարժեք զարգացում: Դաստիարակչական ներգործությունը մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: Հակառակ դեպքում թե՛ մեկ, թե՛ մյուսը դրական արդյունք չեն կարող տալ: Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝

- ուսուցում,
- գնահատում
- հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում:

Դպրոցական ուսուցումը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են՝ հետաքրքասիրությունը, ուշադրությունը, պահանջկոտությունը և բնավորության մի շարք այլ գծեր:

Դաստիարակչական աշխատանքը հիմնականում նպաստում է երեխայի լայն և խոր ճանաչողական հետաքրքրությունների, ինքնակրթության, ինքնազարգացման պահանջմունքների ձևավորմանը:

Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի և ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր:

Ծնող-ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակրգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Ծնողների և ուսուցիչների իսկական համագործակցությունը միշտ էլ հետևում են դրական արդյունքներ՝

- ձևավորում է փոխադարձ վստահություն,
- ծնողները և ուսուցիչներն աշխատում են որպես մեկ խումբ , որպեսզի յուրաքանչյուր երեխայի համար ստեղծեն հետաքրքիր ուսուցման փորձառություն,
- երեխաները շահում են մեծահասակների համագործակցող խմբի առկայությունից։

Ծնող-ուսուցիչ փոխհարաբերության ձևերը

- ծանոթանալ աշակերտի ընտանիքների հետ,
- ծնողական ժողովների, թեմատիկ և անհատական խորհրդատվության միջոցով ծնողների համար կազմակերպել հոգեբանամանկավարժական զրույցներ, սեմինարներ,
- կազմակերպել հանդիպումներ այն մարդկանց հետ, ովքեր դրական ազդեցություն ունեն երեխայի վրա,
- անցկացնել միջոցառումներ ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ
- դպրոցի հոգեբան-մանկավարժների հետ սովորեցնել ծնողներին հաղթահարել և կանխարգելել ընտանեկան կոնֆլիկտները, հարթել երեխաների և ծնողների միջև եղած տարաձայնությունները,
- ծանոթանալ աշակերտների ընտանիքների հետ, ուսումնասիրել երեխաների դրությունը ընտանիքում և նրանց կյանքի պայմանները,
- հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, որոնց թեմաների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, դասարանի և դպրոցի խնդիրները,
- ըստ անհրաժեշտության՝ անցկացնել ծնողի համար անհատական և խմբային խորհրդատվություն,
- դասարանի բոլոր ծնողներին ներգրավել բոլոր տեսակի դասարանական աշխատանքների մեջ,
- կազմակերպել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեություն,
- խրախուսել դպրոցի և դասարանի կյանքում ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողներին,
- ցուցադրել և ոգևորել դասարանի և դպրոցի կյանքին ակտիվորեն մասնակցող ծնողների անհատական նախաձեռնությանը:
-

Ծնողների և ուսուցիչների իսկական համագործակցությունը միշտ էլ հետևում են դրական արդյունքներ՝

- ձևավորում է փոխադարձ վստահություն,
- ծնողները և ուսուցիչներն աշխատում են որպես մի խումբ, որպեսզի յուրաքանչյուր երեխայի համար ստեղծեն եզակի և հետաքրքիր ուսուցման փորձառություն,
- երեխաները շահում են մեծահասակների համագործակցող խմբի առկայությունից:

Ամփոփում

Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Ընտանիք և դպրոց համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում, նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար գլխավորը, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց-ընտանիք համագործակցությունը ամուր հիմքերի վրա դնելը:

Եզրակացություն

Ելնելով բոլոր վերլուծություններից՝ կարելի է գալ այն եզրակացության, որ ուսուցիչն ու ծնողը (խնամակալը) ամուր դաշնակիցներ են:

Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է ստանալ դրական արդյուքներ:

Այն արդի պահանջ է: Երեխայի ուսումնադաստիարակչական գործունեության ճանապարհին ուսուցիչը և ծնողը պետք է ոչ թե համընթաց կքայլեն երեխայի հետ, այլ մի քանի քայլ առաջ՝ կանխատեսելու հնարավոր խոչընդոտները և օգնելու երեխային հեշտությամբ հաղթահարել դրանք:

Ուսուցչի և ծնողի համագործակցությամբ նրանք դառնում են ուսուցման գործընթացի և արդյուքների համար պատասխանատվության կրողներ, իսկ ուսումն անձնակետրոն է:

Համագործակցության արդյունքում բարձրանանում է դպրոցի վարկանիշը, հեղինակությունը, հարգանք է ստեղծվում ուսուցչի և ուսման նկատմամբ: Համագործակցության արդյունքում ձևավորվում է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, մարդասիրության ոգով դաստիրակված, մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող սերունդ:

Ծնող-ուսուցիչ համագործակցությունը կօգնի խարխլված ընտանիքների կայունացմանը:

Ի վերջո ընտանիքների բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմամբ կլուծվի համայնքի զարգացման խնդիրներից մեկը:

Գրականություն

1. Մակարենկո Ա. , Գիրք ծնողների համար , Երևան, 1953

2. Յու. Կ. Բաբանսկի, Մանկավարժություն, մաս1-ին, Երևան, 1986

3. Բալյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան ,1983

4. Վ.Ա.Սուխոմլինսկի <<Ծնողական մանկավարժություն>> Երևան 1979

5. Յա.Ս.Տուրբովսկոյ <<Մանկավարժական ազդեցության միջոցներն ու մեթոդները>> Երևան , 1981